ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Տիգրան Արզումանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ղրղզստանի Հանրապետություն, քաղաք Բիշկեկ

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողով

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Ս.թ. սեպտեմբերի 24-ից 27-ը ք. Բիշկեկում կայացած ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի 19-րդ նիստի մասնակցություն

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի 19-րդ նիստը անցավ համաձայն օրակարգի (կցվում է), քննարկվել են օրակարգում ներկայացված բոլոր հարցերը:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Ս.թ. սեպտեմբերի 25-ին կայացել է ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի աշխատանքային խմբերի ղեկավարների նիստը, որի ընթացքում ամփոփվել են կատարված աշխատանքները:

   Ս.թ. սեպտեմբերի 26-ին մինչ հանձնաժողովի նիստի մեկնարկը հանդիպել եմ Բելառուսի Հանրապետության էներգետիկայի նախարարի տեղակալ պարոն Միխադյուկի հետ: Քննարկել ենք էներգետիկայի բնագավառում ընդհանուր համագործակցության հարցեր: Պարոն Միխադյուկը տեղեկացրեց Բելառուսի Հանրապետությունում կառուցվող ատոմային էնեկտրակայանի ընթացքի մասին, հայտնելով, որ ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի ֆիզիկական գործարկումը նախատեսված է 2019 թվականին:

   ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի 19-րդ նիստի ընթացքում ներկայացվել է Ղրղզստանի Կադժի-Սայ տեղամասում կատարված ուրանի հանքարդյունաբերության հետևանքով վնասված

հողերի վերականգնման աշխատանքների ընթացքը: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև սույն թվականի ավարտը:

Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման Բազային կազմակերպության գործունեության ներկայացման ժամանակ, ներկայացվեց նաև, որ վերջինիս աջակցությամբ Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանից (ՀԱՊՀ) ՌԴ Ազգային Հետազոտական Միջուկային Համալսարան «ՄԻՖԻ»-ում ս.թ. մագիստրական թեզը պաշտպանել են 4 մագիստրոս, որոնցից մեկը շարունակելու է ուսումը ասպիրանտուրայում:

Սեպտեմբերի 28-ին կազմակերպվել է տեխնիկական շրջայց Կադժի-Սայ տեղամաս կատարված աշխատանքների ներկայացման համար:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանձնաժողովի 19-րդ նիստի ավարտին ստորագրվել է արձանագրություն (կցվում է): ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի 20-րդ նիստը նախատեսվում է անցկացնել Բելառուսի Հանրապետությունում 2019 թվականին:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքները ԱՊՀ անդամ երկրների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովում: Հայաստանում ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման ընդլայնման նպատակով հնարավորության դեպքում աջակցել ՀՀ գիտական կազմակերպությունների ներգրավմանը Հանձնաժողովի շրջանակներում իրականացվող նախագծերին:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ